

Դպրոցականները մեկնեցին ճամբարային հանգսի

19.06.2015

Հունիսի 19-ից Հանքավանի „Հասմիկ,, ճամբարում ի թիվս Հանրապետության և Արցախի դպրոցականների, իրենց ամառային հանգիստը կանցկացնեն նաև Գեղարքունիքի մարզի դպրոցականները: Համաձայն ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 19-ի՝ „Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման,, նպատակով կայացրած N 400 որոշման, Հանքավանի „Հասմիկ,, ճամբարում նախատեսված է կազմակերպել զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների՝ 7-13 տարեկան երեխաների ամառային հանգիստը: Ճամբարն իրականացվում է 3 հերթափոխով, 20-ական օրով: Առաջին հերթափոխում Գեղարքունիքի մարզից կհանգստանան նախատեսված չափորոշիչները բավարարող՝ 115 երեխա: Վերջիններս ընդգրկվել են համայնքապետարանների կողմից Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն ներկայացրած տեղեկանքների հիման վրա: Հունիսի 19-ի առավոտյան Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հանդիպեց Գավառի տարածքի համայնքներից ճամբար մեկնող առաջին խմբին: Մարզի ղեկավարը զրուցեց երեխաների ու նրանց ծնողների հետ, հաջողություն ու հաճելի հանգիստ մաղթելով բոլոր ճամբարականներին: Հանքավանի „Հասմիկ,, ճամբարի մնացած երկու հերթափոխերում Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքներից կհանգստանան մոտ 100-ական երեխա: